

## Հ. Ռ. Ավետիսյան

**ՄԻ ՔԱՆԻ ԹՈՒՅՑՆԵՐԻ ԱՐՏԱԲՆԱՅԻՆ ԿԻՐԱԾՈՎԱՆ ՓՈՐՁԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԴԱՇՏԱՄԿՆԵՐԻ ԴԵՄ**

Հայաստանում տարածված վասակար կրծողներից գաշտամկները ամենավտանգավորներն են գյուղատնտեսության համար: Այդ կենդանիների մասսայական բազմացման տարիներին ռեսպուբլիկայի գյուղատքներությունը մեծ կրուստաներ է ունենում:

Հասարակական գաշտամկան՝ *Microtus socialis* Pall. տարածման արեալը ամբողջական չէ. նրա հիմնական օջախը գտնվում է Նոյեմբերյանի և նրան հարևան Խջևանի ու Շամշադինի շրջաններում, սակայն այդ վասատուից զերծ չեն նաև ռեսպուբլիկայի հարավարևելյան մի քանի շրջաններ:

Հասարակական գաշտամկան հիմնական օջախներում նրանց հասցրած վասան այնքան զգալի է, որ գաշտային կուլտուրաների թերքի կորուստները երեքն զգալի չափերի են հասնում, իսկ կրծողաձքների պատճառով այդիների տարեկան վերանորոգությունները հաճախ 30—50% են կազմում (*Քալանթթարյան և Ավետիսյան [1]*):

Զմռան սեղոնում, երր գաշտամկները կերի պակաս են զգում, մկնում են սնվել ծառերի ու թփերի կեղևներով և արմատներով, որի հետեանքով այդ բույսերը մասսայաբար չորանում են:

Զանազան թփուտներ, ինչպիսիք են, օրինակ, գժնիկը (*Paliurus mill.*, *մոշին* (*Rubus L.*), մասրենին (*Rosa L.*) և այլն, մտենաբարենպաստ պայմաններն են սահեղծում այդ կրծողների համար:

Զմռանը այդ թփուտների տակ նրանք պատսպարվում են ցրտից և զանազան գիշատիչներից, ինչպիսիք են, օրինակ՝ *Buteo rufinus*, *Falco tinnunculus*, *Bubo bubo* և այլն:

Գաշտամկների համար ոչ պակաս բարենպաստ պայմաններ են սահեղծում նաև փարթամ աճող և գետինը ծածկող բաղմաթիվ մոլախոտերը, ինչպիսիք են, օրինակ՝ *Cirsium* sp., *Callicephalus nitens*, *Carduus hamulosus*, *Reseda luteola*, *Chrozophora tinctoria*, *Daucus carota*, *Gypsophila elegans* և այլն: Այդ մոլախոտերը փարթամ աճելով, ծածկում են գետինը, պատըսպարելով կրծողներին նրանց բնական թշնամիներից, իսկ այդ բույսերի սամիկում աճող այնպիսի մոլախոտեր, ինչպիսիք են՝ *Agropyrum intermedium*, *Setaria glauca*, *Agropyrum cristatum*, *Aegilops cylindrica*, *avena sativa* և այլն, գաշտամկների համար առատ կերի բազա են հանդիսանում:

Հասարակական գաշտամկան հիմնական օջախներում բարենպաստ են նաև կլիմայական պայմանները: Զերմաստիճանի այնպիսի տառանությունը, որոնք խափանեն կրծողների ուժեղ բազմացումը, այդ վայրերում համարյա թե չի նկատվում:

Այդպիսով, մեր ռեսպուբլիկայում այդ կրծողների համար առկա են բոլոր բարենպաստ կենսապայմանները, իսկ եթե դրան ավելացնենք նաև

այն, որ դաշտամկների գեմ սխտեմատիկ և մեծ մասսի թևեր ընդգրկող պայքար չի մղվում, ապա պարզ կլինի, թե ինչո՞ւ համարյա ամեն տարի այդ կրծողները հանդես են դալիս մեծ քանակությամբ և լուրջ կորուստներ պատճառում գյուղատնտեսությանը:

Ավելի բարփոք չէ գրությունը նաև սովորական դաշտամկան (Microtus arvalis Pall.) տարածման վայրերում: Այս վնասատուն գրավում է սեսպուրլիկայի տերթառիայի մեծ մասը և հանդիպում է, ինչպես Արարատյան հարթավայրի ոռոգելի տարածություններում և ճանձացած գետահովիաներում, այնպես էլ սեսպուրլիկայի նախալեռնային, լեռնային և բարձր լեռնային տարածություններում: Այս կրծողն ինչպես իր տարածվածությամբ, այնպես էլ հասցրած տնտեսական վնասի չափով առաջնակարգ տեղ է գրավում:

Այս վնասատունների հիմնական օջախները գտնվում են սեսպուրլիկայի լեռնային և բարձր լեռնային շրջաններում, որտեղ նրանց համար կան բոլոր բարենպաստ պայմանները՝ հաճախակի մասսայարար հանդես գալու համար:

Սակայն երկրի լեռնային մասերում, իսկ ավելի հաճախ նաև նրանց տարածման ավելի ցածրագիր մասերում, այդ վնասատունների քանակի ուժեղ անկում է նկատվում, որը հիմնականում պետք է բացատրել դաշտամկների համար վաղ գարնանը ստեղծվող անբարենպաստ կիրճայական պայմաններուի:

Վերջին տարիների փորձերը (Մարդանյան և Քալանթարյան [4], Քալանթարյան [2]) ցույց են տալիս, որ պայքարի քիմիական մեթոդի կիրառումով միանդամայն հնարավոր է լավ արդյունքների հասնել, սակայն մինչև այժմ մշակված եղանակների կիրառումով, երբ կրծողների ամեն մի բնանցք թունավորվում է առանձին, դաշտամկների մասսայական բազմացման տարիներին լավ արդյունքների հասնել հնարավոր չէ: Նման տարիներին, ինչպես աշխատաղ ձեռքը, այնպես էլ ժամանակը բաժական չեն լինի պայքարի գործը հաջողությամբ ավարտելու համար: Այդ պատճառով առաջնակարգ նշանակություն է ստանում պայքարի գործի մեքենայացման հարցը, ընդոււկ մինչև օգանակերի կիրառումը:

Պրոտոպապովի ավյալներով [5] ավիրոքիմ մեթոդով մեկ աշխատանքային օրում կարելի է 400 հեկտար տարածության վրա պայքար մղել: Այժմ արդեն մշակված են այնպիսի հարմարանքներ, որոնց միջոցով օգանակը մեկ աշխատանքային օրում կարող է մշակման ենթարկել 1600 հեկտար տարածություն: Սակայն, նախօրոք անհրաժեշտ է մեր սեսպուրլիկայի պայմաններում փորձեր կազմակերպել և պարզել պայքարի արտարնային մեթոդի կիրառման հնարավորությունները, սահմանել այդ մեթոդով գործադրվելիք թույնի տեսակը, նրա օպակիմալ քանակը թունավոր գրավչանութերի մեջ, ծախսման նորմաները և այլն:

Կարենը է նաև պարզել այն հանգամանքը, թե արտարնային պայքարը որևէ վանդակ չի ստեղծում ընտանի և օգտագետ վայրի կենդանիների համար:

Լոգվինովի տվյալներով [3] Ազրբեջանում ավիրոքիմ մեթոդը գաշտամկների դեմ լավ արդյունք է տվել: Այդ մեթոդով նրա կողմից կիրառ-

վել է նատրիումի արսենիտի  $50/0$  լուծույթ, ծախուման նորմա ընդունելով  $40-50$  լ հեղուկ ամեն մի հեկտարին:

Մեր կարծիքով՝ այդ թույնի կիրառումը նպատականարմար չէ, քանի որ նատրիումի արսենիտի լուծույթը կանաչ բույսերի վրա այրվածքներ է առաջացնում: Բացի այդ, բուսականության թունավորումը մասսայական կատարած կառաջացնի խոռավիճակը ընտանի և վայրի կենդանիների մեջ, որ պետք է համարել անհանգույրմէլի:

Անհրաժեշտ է փորձնական աշխատանքներ կատարել այն ուղղությամբ, որպեսզի մշակվի բարձր արտադրողականություն ունեցող, էժանագին մի միջոց, որը բարձր էֆեկտ տալով կրծողների դեմ, միաժամանակ անվտանգ լինի օգտավեա կենդանիների համար:

Հայաստանի պայմաններում կրծողների դեմ մզվող պայքարի աշխատանքների մեքենայացման գծով փորձեր չեն կատարվել: Փորձարկված չեն նաև արտաքինային պայքարի եղանակները, մինչդեռ զրանց կարիքը իմաստ գգալի է:

Այդ բացը վերացնելու համար Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի պաշտպանության սեկտորը, սկսած 1953 թ. սեպտեմբերի մի քանի շրջաններում հաստրակական և սովորական գաշտամկների գեմ արտաքինային պայքարի փորձեր է կազմակերպել:

Համեմատության համար այդ փորձերին գրգանեռ ստուգման են հնդարկվել գոյություն ունեցող ներքնային կիրառման մի քանի եղանակները, որոնցից մի քանիսը այժմ կիրասիվում են արտադրության մեջ:

Փորձարկվել են նաև Պ. Ա. Սվերիգենկոյի [7] առաջարկած արհեստական բների եղանակը (թունավորման մշակական կետեր):

Փորձերը զրվել են 3 կրկնողությամբ, բացառապես գործող բնանցքերի վրա: Փորձի 4-րդ օրը կատարվել է 2-րդ փակումը, իսկ գրանից 4 օր հետո հաշվառվել է փորձի էֆեկտիվությունը:

Ցինկի ֆոսֆիդի թունավոր գրավչանյութ պատրաստելու համար վերցված է գարի, հատիկի  $20/0$ -ի չափով բուսական յուղ և 3, 5 և  $70/0$  ցինկի ֆոսֆիդ: Փորձի ընթացքում կազմակերպվել են գիակների հաշվառման, որի համար հավաքվել են ինչպես բներում գտնված, այնպես էլ նրանցից գուրու եղած գիակները:

Հասարակական գաշտամկան գեմ փորձերը զրվել են նոյնամբերյանի շրջանի թունավոր անվան սովորողի գաշտերում:

Ստորև բերված են գարնանային (15/III—18/IV 1953 թ.) փորձերի արդյունքները:

Աղյուսակի տվյալներից երեսում է, որ ցինկի ֆոսֆիդով պատրաստած թունավոր գրավչանյութերը գարնանը խամ հողերի վրա շաղ տալու գեպքում լավ արգյունք է ստացվում՝ այն գեպքում, երբ ամեն մի  $2\text{-ի}$  վրա շաղ է տրվում 2 հատիկից ոչ պակաս, իսկ ցանքերի մեջ՝ 4 հատիկ:

Այդ նույն թունավոր գրավչանյութերից ամեն մի բնանցքում 4 հատիկ մացնելու գեպքում խամ հողերում ստացվում է  $96,30/0$  էֆեկտիվություն, իսկ ցանքատարածություններում՝  $98,60/0$ : Ինչպես ցույց են տալիս այդ թվերը, թունավոր գրավչանյութերի ներքնային կիրառման գեպքում անմշակ և ցանովի հողամասերի վրա գրված փորձերի արդյունքները իրարից շատ չեն տարբերվում: Թունավոր հատիկների հետագա ավելցման

գեղքում (8 հատիկ ամեն մի բնանցքին) էֆեկտիվության զգալի ավելացում չի նկատվում։ Այս վերջին գեղքում բների պեղումների ժամանակաշրջանը զարգացնեց, որ թունավոր գրավչանյութերի հատիկների մեծ մասը դաշտամկների կեր չէր գարձել և բնուղիներում սկսել էր ծլել։

Տեղին է նկատել, որ ոչ բուսական յուղերը և ոչ էլ ինքը՝ ցինկի փառփիղը չեն զցում գրավչանյութի (գարու) ծլունակությունը։ Թունավոր հատիկները 8-10 օրվա ընթացքում բնուղիներում ծլելով՝ կորցնուն իրենց նշանակությունը ձեռևեաբար, Սվերիգինկոյի [7] այն կարծիքը թե այդ թունավոր գրավչանյութերը, նույնիսկ խոնավ պայմաններում, կարող են տեսլանորեն պահել իրենց թունավոր հատկությունները, մեր պայմանների համար չի հաստատվում։

Շատ բարձր էֆեկտ է ստացվում բնանցքերի շուրջը եղած բուսականությունը կալցիումի արսենիտով փոշոտելու գեղքում։ Սակայն պարքարի այդ եղանակի կիրառման հետեանքով բույսերի վրա ուժեղ այրվածքներ են առաջանում և նրանք չորանում են։ Այդ հանգամանքը մեր ստիպում է հարժարվել կալցիումի արսենիտի նման կիրառումից։

Բույսերի փոշոտման եղանակի այս թերություննից խուսափելու նպատակով հետագա փորձարկումների համար նպատակահարմար գտանք կար-

#### Աղյուսակ 1

Հասարակական դաշտամկան դեմ քիմիական պայքարի դարնանային  
փորձերի արդյունքները

Թունավոր և թունավոր գրավչանյութերը	Կիրառման եղանակը	Ծախսման նորման	Միջին էֆեկտիվությունը % ներով	
			իստ հողերում	ցանքերում
Թունավոր գրավչանյութը հավասարապես շաղէ տրված դաշտում	Թունավոր գրավչանյութը հավասարապես շաղէ տրված դաշտում	1 հատիկ 1մ²-ին	86,3	—
Թունավոր գրավչանյութը հավասարապես շաղէ տրված դաշտում	Թունավոր գրավչանյութը մացվել է բնանցքերի մեջ	2 հատիկ 1մ²-ին	96,1	53,3
Թունավոր գրավչանյութը մացվել է բնանցքերի մեջ	Թունավոր գրավչանյութը մացվել է բնանցքերի մեջ	4 հատիկ բնանցքին	96,6	98,6
Թունավոր գրավչանյութը մացվել է բնանցքերի մեջ	Թունավոր գրավչանյութը մացվել է բնանցքերի մեջ	8 հատիկ բնանցքին	—	98,4
Գղալով լցվել է բնանցքերի մեջ	Գղալով լցվել է բնանցքերի մեջ	1 դ բնանցքին	—	92,7
Կալցիումի արսենիտի փոշի	Բնի շուրջը փոշումիկել է բուսականությունը 0,5 մ տրամագծով	5 դ բնանցքին	—	98,5
Գարի, թրջած նատրիումի մեջ արսենիտի 50% լուծում	Գղալով լցվել է բնանցքերի մեջ	4 հատիկ բնանցքին	—	39,8

ցիումի արսենիտը փոխարինել կալցիումի արսենատով, որը, չնայած իր թունունակությամբ որոշ չափով հետ է մնում առաջինից, բայց անձրևաշրում և ցողի կաթիլներում համարյա լրիվ անլուծելի լինելով, բույսերի վրա այրվածքներ չի առաջացնում: Սակայն, այս գեպում էլ մեկ ուրիշ գժվարություն է առաջ գալիս, զա այն է, որ կալցիումի արսենիտի մասնիկները շատ փոքր լինելով փոշոտելիս նրանց մի զգալի մասը օգի վերաբարձ հոսանքների հետ գնում և անօգուտ կորչում է (Սնկիրե [9]): Հայաստանի լուսային պայմաններում օգանավերն ստիպված կլինեն թըռչել 15—20 մետրից ոչ պակաս բարձրության վրա և այդ հանգամանքն ավելի ևս կդժվարացնի կալցիումի արսենատի կիրառումը: Նման գեղքերում շատ ձեռնուու կլինի, որպես բռնիքիկատոր, կալցիումի արսենատին ալիկացնել  $18^0/0$  հանքային յուղ, որը, Սաղսնովի [6] ավյալներով, ավելացնում է թույնի մասնիկների ֆլոկուլիացիան և պակասեցնում նուրբ մասնիկների կորուսար:

Նաարը կումի արսենիտով պատրաստած թունավոր գրավչանյութերի ներբնային կիրառումից բարձր էֆեկտ չի ստացվել. միջին հաշվով այդ եղանակի էֆեկտիվությունը  $39,8^0/0$ -ից ավելի չի եղել: Այդ իսկ պատճառով, ցինկի ֆոսֆիդի և կալցիումի արսենիտի առկայության գեպքում դաշտամկների գեմ նատրիումի արսենիտով պայքարելն անհմաստ է:

Մեր ուսապուրիլիկայի պայմաններում, ինչպես մենք կտեսնենք ստորև, Սվիրիդենկոյի կողմից առաջարկած արհեստական բների եղանակը նույնպես ցանկալի արդյունք չի տալիս:

Գարնանային փորձերի ընթացքում 5 արհեստական բների մեջ լցվել էր 50-ական դրամ  $3^0/0$  ցինկի ֆոսֆիդ պարունակող թունավոր հատիկների Այդ փոսերը ծածկվել էին քարերով այնպես, որպեսզի թունավորած համեմենքը դաշտամկներին մատչելի լինեն:

Փորձը ցույց տվեց, որ 16 օրվա ընթացքում դաշտամկները չեն մտել արհեստական բները, միայն մի փոսում թունավոր հատիկների կույտը ցրված էր: Փորձերի ընթացքում տեղայած հորդ անձրեների հետեւանքով գրավչանյութի հատիկներն սկսել էին համատարած ծլել:

Ամառային փորձերը (16—30/VII 1953 թ.) կատարվել են նույն սովորողի դաշտերում: Ստորև բերված են այդ փորձերի արդյունքները:

Վերը բերված տվյալներից պարզվում է, որ ամառային թունավորումները ընդհանուր առմամբ ավելի պակաս էֆեկտ են տալիս, քան գարնանայինները: Դա բացատրվում է նրանով, որ ամռան սեղոնում, երբ դաշտում աճած են մինում մեծ քանակությամբ մոլախոտեր, փորձի համար շատ տված թունավորած հատիկներ գանելը դաշտամկների համար շատ ավելի գժվար է, քան գարնանը, երբ դաշտերը համեմատարար ավելի մաքուր են լինում: Բացի այդ, դաշտամկներն առաջին հերթին սնվում են իրենց բնական կերպով՝ կանաչ խոտերով ու մոլախոտերի սերմերով, որոնք ամռան այնքան շատ են լինում դաշտում:

Ցինկի ֆոսֆիդով պատրաստած թունավոր գրավչանյութը բնանցքերը մացնելու վարիանտի տվյալներից պարզվում է, որ հատիկների թիվը ամռան սեղոնում ամեն մի բնանցքին պետք է լինի 4 հատից ոչ պակաս:

Համեմատելով 3 և  $5^0/0$ -ային թունավոր գրավչանյութերի արդյունքները, կարելի է եղբակացնել որ հասարակական դաշտամկան գեմ պայքա-

րելիս գրավչանյութի մեջ թույնի պարունակությունը  $30\%$  ից ավելի վերցընելն իմաստ չունի:

Նատրիումի արսենիտով պատրաստած թունավոր գրավչանյութերի փորձարկումը ամռան սեզոնում նույնպես փոքր արդյունք է տվել: Ինչպես գարնանը, այնպես էլ ամռան սեզոնում բներից գաշտամկների գուրսաված հողի մեջ մեծ թվով թունավորված հատիկներ կային: Ցածր է ֆեկտիվության պատճառով այս թույնով պատրաստած գրավչանյութերի կիրառումը հետագա փորձերի ընթացքում գաղարեցվեց:

Դաշտամկների թունավորման մշտական վայրեր ստեղծելու փորձերն այս անգամ ևս շոշափելի արդյունք չեն տվել:

### Աղյուսակ 2

Հասարակական դաշտամկան գեմքիմիական պայքարի ամսապայման  
փորձերի արդյունքները

Թունավոր գրավչանյութ ցորենից և $30\%$ ցինկի փոսֆիդից	Ծառիկ 1 մ <sup>2</sup> -ին	Միջին էֆեկտիվությունը $0\%$ ներով
Թունավոր գրավչանյութ ցորենից և $30\%$ ցինկի փոսֆիդից	4 ծառիկ 1 մ <sup>2</sup> -ին	71,7
Թունավոր գրավչանյութ ցորենից և $30\%$ ցինկի փոսֆիդից	2 ծառիկ բնանցքին	81,9
Թունավոր գրավչանյութ ցորենից և $30\%$ ցինկի փոսֆիդից	4 ծառիկ բնանցքին	88,7
Թունավոր գրավչանյութ ցորենից և $50\%$ ցինկի փոսֆիդից	4 ծառիկ 1 մ <sup>2</sup> -ին	47,6
Թունավոր գրավչանյութ ցորենից և $50\%$ ցինկի փոսֆիդից	4 ծառիկ բնանցքին	84,7
Կալցիումի արսենիտ	1 զ բնանցքին	62,1
Թունավոր գրավչանյութ դարուց և նատրիումի արսենիտից	4 ծառիկ բնանցքին	54,3

Դաշտում, 0,5 հեկտար տարածության վրա պատրաստաված 10 արհետական փոսերում, որոնք ունեին 20 ուժ տրամագիծ և 13—16 ուժ խորություն, տեղավորվեցին լուցկու տուփեր, յուրաքանչյուրի մեջ լցվեցին 200 հատ  $30\%$  ցինկի փոսֆիդ պարունակող թունավոր հատիկներ: Հարեւան դաշտում նույնպիսի տարածության վրա տեղավորվեց 5 տուփ՝ թունավոր գրավչանյութերով: Տուփերը գրվել էին փակ վիճակում և ծածկվել փշերով այնպես, որ գաշտամկները ազատ մնուած ունենան գեպի տուփերը: Փորձերի ամբողջ ընթացքում (16 օր) առաջին վարիանտում (մեկ հեկտարին 20 քուն) գաշտամկները չեին մնանել տուփերից և ոչ մեկը: Միայն մեկ քունում, որի պատի վրա դաշտամկները երկու անգը էին բաց արել, տուփը ծածկվել էր հողով և մի փոքր կրծված էր կողքից, սակայն հատիկները մնացել էին նույնությամբ:

Մյուս վարիանտում (մեկ հեկտարին 10 քուն) 5 տուփից պատվել էր

Յ-ը, տուփերից առաջինում պակասել էր 1, երկրորդից՝ 4, իսկ հինգերորդից՝ 25 հատիկ:

Փորձերը կրկնվեցին նաև աշնանը, սակայն նրանց արդյունքները շատ ավելի վասեղան, քան նախորդ սեզոններում կատարված փորձերինը:

Նախնական փորձերից պարզվում է, որ հասարակական գաշտամկան դեմ ամենաձեռնտու միջոցը, ցինկի ֆոսֆիդով պատրաստած 30/0 թունավոր գրավչանյութի գարնանային կիրառությն է, որից ամեն մի մ²-ին պետք է շագ տալ ոչ պակաս, քան 4 հատիկ: Եռոյնքան հատիկներ էլ պետք է դնել ամեն մի բնանցքում այդ գրավչանյութի ներբնային կիրառման դեպքում:

1954 թվականին նմանօրինակ փորձեր կազմակերպվել են Ղուկասյանի և Ն. Բայյալեսի շրջաններում սովորական գաշտամկան դեմ: Այս գաշտամուկն իր վեասակարությամբ գերազանցում է հասարակականին:

Ղուկասյանի շրջանում (Վ. Ղուկասյան) կազմակերպած փորձերը թե իրենց մեթոդիկայով և թե թույների աեսակներով համարյա թե չեն տարրերվել 1953 թվականին հասարակական գաշտամկան դեմ կազմակերպած փորձերից: Գարնան սեզոնում այդ շրջանում գաշտամկների գործող բընանցքերի թիվը մեկ հեկտարին հասնում էր 1600-ի:

Ստորև բերվում են (2-17/V—1954 թ.) գարնանային փորձերի արդյունքները:

### Աղյուսակ 3

Քիմիկական պայքարի փորձերի արդյունքները սովորական գաշտամկան դեմ  
Ղուկասյանի շրջանի Վ. Ղուկասյան դրույթ

Թույնի անունը	Ծախսման սորման կ կիրառելու եղանակը	Միջին թյունը 0/0-ներով	Հայտնաբեր- ված գիտական ներով
	2 հատիկ բնանցքին	71,2	7
	4 հատիկ բնանցքին	81,7	10
30/0 թույնի պարունակությամբ	3 հատիկ 1 մ²-ի վրա	73,8	11
և ցորենից պատրաստված թունավոր գրավչանյութ	6 հատիկ 1 մ²-ի վրա	80,8	13
	8 հատիկ 1 մ²-ի վրա	87,2	11
	4 հատիկ 1 մ²-ի վրա	90,7	10
Կալցիումի արսենիտ	1 գ բնանցքին	73,5	4
Կալցիումի արսենատ	Բույսերը համարած փոշոտել 10 կգ/5	67,2	4
	Բույսերը համարած փոշոտել 20 կգ/5	91,1	11

Փորձի տվյալներից երևում է, որ սովորական գաշտամկան համար թույնի մահացու գողան ավելի բարձր պետք է վերցնել: Այս փորձերում թունավոր գրավչանյութերի ինչպես ներբնային, այնպես էլ արտաքնային կիրառման գեպքում ծախսման նորմաների ավելացմանը զուգընթաց

ավելացել է նաև փորձի էֆեկտիվությունը: Նույնն է նկատվում նաև գրավչանյութերի մեջ թույնը ավելացնելու դեպքում:

Այս հանգամանքը մեզ ստիպեց հետագա փորձերի ընթացքում ավելացնել ինչպես թունավոր գրավչանյութի ծախսման նորմաները, այնպես էլ ցինկի փոփոքի պարունակությունը գրավչանյութի մեջ:

Չնայած նրան, որ կալցիումի արսենատով բույսերը փոշոտելուց անմիջապես հետո տեղացած հորդ անձրեները լվացին փոշոտած բույսերը այնուամենայնիվ այդ փորձերից բավարար արդյունքներ ստացվեցին: Կալցիումի արսենատի 10-կգ-ը մեկ հեկտարին տվեց 67,2% էֆեկտիվություն, իսկ 20 կգ-ը՝ 91,1%:

Ամենայն հավանականությամբ, գարնանը ոչ միայն բույսերի, այլև հողի համատարած փոշոտումը կարող է լավ էֆեկտ տալ:

Միանգամայն հասկանալի է, որ քամիներ և տեղումներ չի ինելու գեպքում, այս թույնի գարնանային կիրառումից համեմատարար ավելի լավ արդյունք կատացվի: Սակայն, չնայած իր բավարար էֆեկտիվությանը, այս թույնով բույսերի փոշոտման եղանակը շատ թերություններ ունի: Դրանցից ամենահիմնականը անսառների համար կարանափն սահմանելու անհրաժեշտությունն է: Բացի այդ, այս եղանակը պահանջում է բարենպաստ կիմայական պայմաններ և թունավոր նյութերի էլ մեծ ճախում:

Ընթացիկ տարվա աշնանային փորձերը (20/IX—16/X) կազմակերպվել են Նոր Բայազետի շրջանում (Հացառատ գյուղի կողմանություն), որտեղ դաշտամիների գործող բնանցքերի թիվը մեկ հեկտարի վրա հասնում էր 10 հազարի. այդտեղ սովորական փորձերից բացի, կազմակերպվել են նաև արցադրական փորձեր:

Ստորև (աղ.4) բերված են այդ փորձերի արդյունքները.

Փորձերի ավյալներից երեսում է, որ գաշտամիների բնանցքերի մեջ թունավոր հատիկներ գցելու եղանակը, ինչպես գարնանը, այնպես էլ այս գեպքում ավելի բարձր էֆեկտ է տալիս, քան նույն քանակությունը ամեն մի մ<sup>2</sup>-ի վրա շաղ տալիս: Այս երեսությը մեզ հնարավորություն է տալիս որոշակիորեն ասելու, որ գաշտամիների ոչ ուժեղ բազմացման տարիներին թունավոր գրավչանյութերը խնայելու և դրանք ավելի արդյունավետ գործադրելու նկատառութիւնը ենքնելով, նպատակահարմար է կիրառել պայքարի ներքնային եղանակը:

Թունավոր հատիկները շաղ տալու վարիանտում ամենաբարձր էֆեկտ ստացվել է մ<sup>2</sup>-ին 12 հատիկ շաղ տալու գեպքում (86,9%), որը հեկտարին կազմում է մոտ 4 կգ թունավոր հատիկ:

Այս գեպքում, երբ մ<sup>2</sup>-ին արվել է 8 հատիկ, ստացվել է 80,3% էֆեկտիվություն, այսինքն՝ ծախսման նորման հեկտարին 1 կգ ավելացնելով՝ էֆեկտիվությունը համեմատական չափով չի աճում և ավելանում է միայն 6,6%: Ծախսման ավելի ցածր նորմաներն իրենց էֆեկտիվությամբ աչքի չեն ընկնում:

Ցինկի փոփոքի պարունակությունը ավելացնելու հետևանքով էֆեկտիվության զգալի աճ է նկատվել միայն թունավոր հատիկները բնանցքի մեջ մացնելու եղանակի գեպքում, իսկ շաղ տալու գեպքում նույնիսկ էֆեկտիվության որոշ անկում է նկատվել:

## Աղյուսակ 4

Քիմիական պայքարի փորձերի արդյունքները սովորական գաշտամկան դեմ  
Նոր Բայազետի շրջանի հացառատ դյուզի կոլտնտեսությունում

Թույնը և թունավոր գրավչանյութը	Կիրառման եղանակը	Ծախսման նորման	Միջին էֆեկտիվու- թյունը $\%$	Հայտնաբե- րած դիակ- ները
		4 հատիկ $1 \text{ m}^2 \cdot \text{ին}$	71,1	5
		6 հատիկ $1 \text{ m}^2 \cdot \text{ին}$	78,3	6
	Զեռքով շաղ տալու եղա- նակով	8 հատիկ $1 \text{ m}^2 \cdot \text{ին}$	80,3	10
Թունավոր գրավչանյութ գարուց և ցին- կի փոսֆիդից	Թույնի պա- րունակությու- նը 50%	12 հատիկ բնանցքում	86,9	10
		2 հատիկ բնանցքում	67,0	7
	Բնանցքերի մեջ գցելու եղանա- կով	4 հատիկ բնանցքում	87,1	8
Թույնի պա- րունակությու- նը 70%	Շաղ տալու եղանակով	6 հատիկ $1 \text{ m}^2 \cdot \text{ին}$	76,9	4
	Բնանցքերի մեջ գցելու եղանակով	2 հատիկ բնանցքում	84,9	4
Կալցիումի արսենիտ	Բնանցքերի մեջ դդալով	1 գ բնանց- քին	76,2	4

Կալցիումի արսենիտի էֆեկտիվությունը կազմել է 76,2%, որը մո-  
տավորապես համընկնում է 50% օային թունավոր գրավչանյութերի այն  
վարիանտին, որտեղ մեկ հեկտարին տրված է եկեղեց 2 կտ թունավորված  
հատիկներ: Այսպիսով, կալցիումի արսենիտն իր էֆեկտիվությամբ շատ  
հետ է մնացել այն վարիանտներից, որտեղ մեկ հեկտարին շաղ տալու  
եղանակով կիրառվել են 3 և 4 կտ թունավոր հատիկներ: Կալցիումի ար-  
սենատով բույսերը փոշոտելու եղանակով փորձարկվել են հեկտարին 5,10  
և 15 կտ. ծախսման նորմաները:

Այս փորձերից, որոնց տվյալները աղյուսակում չեն բերված, հուսո-  
դրող և օրինաչափ արգյունքները չստացվեցին: Ամենաբարձր էֆեկտիվու-  
թյունը 46% է ից չի անցնում:

1954 թվականի աշնանը Ե. Բայազետի և Ստեփանավանի շրջաննե-  
րում կազմակերպիկ են արտադրական փորձեր, որոնց համար օգտագործ-  
վել է 50% ցինկի փոսֆիդ պարունակող հացահատիկի (գարի): Վերջիններս  
գաշտում շաղ տալու համար օգտագործվել են Պո-2 և ԱՆ-2 օդանավերը:  
Ընդամենը մշակման է ենթարկվել 2200 հեկտար տարածություն: Փորձարկ-  
վել են հեկտարին 2 և 3 կտ ծախսման նորմաները:

Այս փորձերի դեպքում 2 կգ ծախսման նորմայից է ֆեկտիվությունը կազմել է  $67,4^0/_{\circ}$ , իսկ 3 կրծից՝  $95^0/_{\circ}$ : Նույն թունավոր գրավչանյութերից Հացառատի կղլանտեսության դաշտում ձեռքով շաղ տրվեց  $0,25$  հեկտար տարածության վրա, ծախսման նորմա ընդունելով հեկտարին 2 կգ: Եֆեկտիվության առաջին հաշվառումից ստացվեց  $72,1^0/_{\circ}$  մահացություն: Ցոթօր հետո կատարված հաշվառումը ցույց տվեց էֆեկտիվության զգալի աճ, որը կազմեց  $80,2^0/_{\circ}$ :

Նմանօրինակ փորձ գրվեց, ծախսման նորմա ընդունելով հեկտարին 3 կգ: Էֆեկտիվության առաջին հաշվառումից ստացվեց  $74,4^0/_{\circ}$ :

Այս փորձերի արդյունքների հիման վրա Հացառատի կղլանտեսությունը 300 հեկտար ցանքատարածության վրա, 3 կգ ծախսման նորմայով պայքար սկսեց գաշտամկների գեմ: Դատելով դիակների առատությունից և ֆիսատվության վերացումից, կարելի է ասել, որ պայքարի արդյունքները շատ լավ էին:

Գետք է ասել, որ թունավոր գրավչանյութերից ստակում են ոչ միայն գաշտամկները, այլև համատերները—*Cricetus (Mesocricetus) auratus*. Դաշտերում հայտնաբերվեց այդ կրծողների Յ գիտակ:

Սովորական գաշտամկան գեմ որպես հեռանկարային միջոց պետք է համարել ցինկի ֆոսֆիգով պատրաստված թունավոր գրավչանյութերը, սակայն ինչպես ցույց է տալիս փորձը, թույնի պարունակությունը պետք է համարվի Յ 5 $^0/_{\circ}$ ի:

Այս եղանակը բարձր էֆեկտ է տալիս և զերծ է այն թերություններից, որոնք յուրահատուկ են բույսերը կալցիումի արսենատով փոշոտելու եղանակին:

Ցինկի ֆոսֆիգի թունավոր գրավչանյութերը ծախսման համապատասխան նորմաների կիրառման դեպքում, ինչպես ցույց են տալիս ֆալկենշտեյնի [10] և մեր փորձերը, միանգամայն անվտանգ են անային ուժայիրի խոռարկեր կենդանիների համար:

Դուկասյանի և Ն. Բայազետի շրջաններում մեր կատարած փորձերը հաստատում են վերը բերված տվյալները:

Բակում 2 մ<sup>2</sup> հարթ տարածության վրա շաղ տրվեց 300 գ մաքուր գարի, այդական բաց թողնվեց Յ ոչխար, որոնք սկսեցին ուտել գարին: Երանցից երկուսը 5—6 բոպերց հետո գաղարեցին ուտելուց, իսկ Յ-րոր շարունակեց հավաքել հատիկները և նրաժարվեց ուտելուց միայն 10 բոպերց հետո: Այնուհետև, նրանցից են ոչ մեկը նորից հատիկները հավաքելու փորձ չարեց: Դրանից հետո գետնի վրա մնաց  $876$  հատիկ (33 գ): Այդ քանակությունը, որը 1 մ<sup>2</sup>-ի վրա կազմում է ավելի քան  $435$  հատիկ, մեր փորձագրած ամենաբարձր ծախսման նորմային գերազանցում է մոտավորապես 36 անգամ:

Փորձերը կրկնվեցին մարգագետնում արածող խոզերի և այլ կենդանիների վրա: Այդական, Յ—5 ոմ բարձրությամբ խիտ խոռածածկոցի առկայության պայմաններում, արածում էր մերունը իր Յ խոճկորի հետ: Երկու մ<sup>2</sup> տարածության վրա շաղ տրվեց 300 գ մաքուր գարի: Խոզերն արածելով անցան այդ տարածությունը, առանց ուշագրություն դարձնելու այնտեղ շաղ տված հատիկների վրա: Ինչ վերաբերում է խոշոր եղջերավոր անասուններին, ապա նրանք շաղ տված հատիկների վրա ոչ մի

ուշադրություն չեն դարձնում, նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց հախօռք ձեռքով կերպում են գարով և վերջինս շաղ են տալիս նրանց աչքի առաջ՝ խոսերի մեջ:

Այս տեսակետից բնորոշ են մեր գիտողությունները Հացառատի կողմանակության գաշտերում:

Հարյուրից ավելի հեկտար տարածության վրա, որտեղ օգանավով և ձեռքով շաղ էին տրված 50/0 թույն պարունակող հատիկներ (ծախսման նորման՝ 1—4 կգ մեկ հեկտարին), սահմանված էր խիստ կարանտին: Սակայն, սկսած փորձի 2-րդ օրվանից, մի քանի հովիվներ խախտեցին կարանտինը և 200—300 ոչխարներով սխառեմատիկ կերպով արածեցրին թունավորած գաշտերը՝ առանց որևէ վատ հետեանքի:

Այս հանգամանքը մեզ հնարավորություն է տալիս պնդելու, որ ցինկի փոսփիդով թունավորած հատիկներով պայքարելու գեղքում կարանտինը միանգամայն ավելորդ է, պայմանով, որ ձեռքով շաղ տալու ժամանակ հատիկները ցրել հավասարաշափ այնպես, որ մ<sup>2</sup>-ին տրվի 12 հատիկից ոչ ավելի: Ինչ վերաբերում է օգանավին, ապա նրա օգանավորձման գեղքում անհամաշափ շաղ տալու վտանգն իսպառ վերանում է:

Ցինկի փոսփիդով պատրաստած թունավոր գրավչանյութերը խիստ վտանգավոր են բնաանի թուչունների, մանավանդ հավերի համար: Նրանք մեծ եռանգով հավաքում են հատիկները և սատկում 1—3 ժամվա ընթացքում:

Այս հանգամանքը մեզ ստիպում է թունավոր գրավչանյութերը շաղ տալու եղանակը կիրառել բնակավայրերից հետո, որտեղ անային թռչունները մուտք գործել չեն կարող: Իսկ թե մեր շաղ տված թունավոր հատիկներին ինչպեսի վերաբերմունք կունենան վայրի հատիկակեր թռչունները մարդ մասին կարելի է բերել մեր գիտողությունների արդյունքները:

Հայաստանում տարածված ճնճղուկների երկու տեսակները Արարատյան հարթավայրի պայմաններում ամռանը և աշնանը դյուզատնաեսական կուլտուրաներին մեծ վնաս են պատճառում: Երանք ոչնչացնում են խաղողի, թթենու, բրնձի, ցորենի և շատ այլ կուլտուրաների բերքը: Այս թուչունների գեմ կազմակերպված քիմիական պայքարի մեր փորձերը ցույց տվեցին, որ նրանք նույնիսկ մաքուր ցորենի կամ գարու հատիկներով լցված կերակրամաններին մոռենում են մեծ զգուշությամբ, միայն 2—3 օրից հետո բնաելանալով կերակրամաններին, իսկ ցինկի փոսփիդով թունավորված և շաղ տրված գրավչանյութերին նրանք բոլորովին չեն մռանում: Այդպիսի վարքագիծ ունեն նաև արտուաները:

Մեր երկու տարվա փորձերի ընթացքում գաշտում չենք գտել ոչ մի հատիկակեր թռչունի դիակ: Չեն նկատվել նաև մինակեր թռչունների և կաթնասունների դիակներ:

Մեր փորձերը ցույց են տալիս, որ կատունները և շները ցինկի փոսփիդի նույնիսկ մեծ դոզացից չեն սատկում: Այսպես, օրինակ՝ հասակավոր կատուն, որը գրավչանյութի հետ կերավ մեկ գրամ ցինկի փոսփիդ, մոտավորապես կես ժամից հետո փոխեց ամբողջ կերածը. Նույնը կատարեց նաև երկրորդ կատվի հետ: Հետագայում նրանք չնայած կենդանի մասցին, սակայն այլևս թունավոր գրավչանյութ չվերցրին: Այդ քանակի թույնը

միանդամայն անվտաս է նաև շան համար (փորձը դրվել է մի հասակավոր շան վրա):

Ամենայն հավանականությամբ, նման հատկությամբ օժտված պետք է լինեն նաև վայրի օգտավետ գիշատիչները, սակայն վերջնական եզրակացության համար անհրաժեշտ է այդ կենդանիների վրա լայն մասշտաբի փորձեր կազմակերպել:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայկական ՍՍՌ-ի պայմաններում հաօտրակական և սովորական դաշտամկների գեմ ցինկի ֆոսֆիդով թունավորած հատիկներով արտաքինային եղանակով (թունավոր գրավչանյութերը դաշտում շաղ տալու միջնորդ) պայքար մղելը միանդամայն հնարավոր է և տնտեսապես շատ ձեռնտու:

Արհեստական բների եղանակը հայկական ՍՍՌ-ի պայմաններում հասարակական դաշտամկան գեմ իրեն չի արդարացնում, հետևապես անկիրառելի է:

2. Թունավոր գրավչանյութերը կարելի է շաղ տալ ինչպես ձեռքով, այնպիս էլ օգտնավով: Վերջին դեպքում ԱՆ-2 օգտնավոր մեկ տշխատանքային օրում կարող է մշակման ենթարկել մինչև 1600 հեկտար տարածություն:

3. Թունավոր գրավչանյութեր շաղ տալու եղանակը տնտեսապես ձեռնտու է դաշտամկների մասսայական բազմացման վայրերում: Այդ կրծողների քանակի քիչ լինելու գեպքում այս եղանակը կարելի է գործադրել այնպիսի վայրերում, որտեղ ներբնային եղանակով պայքար մղելն անհնարին է (թիուտներ, խիտ մոլախոտերով ծածկված տարածություններ, քարակույաներ և այլն):

4. Արտաքային պայքարի գեպքում հասարակական դաշտամկան գեմ ցինկի ֆոսֆիդից և գարուց պատրաստված գրավչանյութի նպատակարմար ծախսման նորման պետք է համարել 2 կգ, իսկ սովորական դաշտամկան համար՝ 3 կգ ամեն մի հեկտարին, ըստ որում հասարակական դաշտամկան համար ցինկի ֆոսֆիդի պարունակությունը պետք է լինի 3<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ սովորականի համար՝ 5<sup>0</sup>/<sub>0</sub>: Ներբնային եղանակով պայքար տանելիս ամեն մի բնանցքին պետք է տալ 4 հատիկ:

5. Ցինկի ֆոսֆիդով թունավորված հատիկները դաշտում հավասարաշափ շաղ տալը (հեկտարին մինչև 3—4 կգ) անվտանգ է այնտեղ արածող կենդանիների համար պայմանով, որ հատիկները շաղ արվեն հավասար խտությումը և գդույշ լինել այն կույտերով թափելուց:

Բնակավայրերում և նրանց շրջակայքում, ուր ընտանի թուչունները և ճաղարները կարող են մուտք գործել, պայքարի արտաքայն եղանակը ոչ մի գեպքում չպետք է թույլատրվի:

Հայկական ՍՍՌ ԳԱ բույսերի

պաշտպանության սեկտոր

Ստացվել է 25 լ 1955 թ.

## Фізична географія

1. Фашлашвиргյան Մ. Հ. և Ավետիսյան Հ. Ռ. Մկնանման և այլ վասակար կրծողներն ու պայմառը նրանց գեմ, Երևան, 1950:
  2. Կալանтарյան Մ. Ա. Результаты испытания фосфата цинка против полевок. Известия АН Арм. ССР (биол. и с.-х. науки), т. IV, 8, 1951.
  3. Логгинов В. В. Причины массового появления мышевидных грызунов в Азербайджанской ССР и оценка способов в борьбе с ними. Тезисы докладов общеизделической сессии секции защиты растений ВАСХНИЛ и Отд. биол. и сельхоз. наук АН Азербайджанской ССР, Баку, 1949.
  4. Марджанян Г. М. и Калантарян М. А. Новое в борьбе с полевками. Известия АН Арм. ССР, 9, 1946.
  5. Протопопов А. Н. Экономический расчет применения авиаахимметода в борьбе с мышевидными грызунами. Труды ВНИСХА, 2(7), 1935.
  6. Сазонов П. А. Минеральные масла как борнификаторы пылевидных инсектицидов. Советская экспедиция по защите растений от вредителей сельского хозяйства в Монголии, Бурнаркомзэм, 1930.
  7. Свириденко П. А. Значение грызунов в проблеме лесоразведения и защита от них питомников и полезащитных лесных полос. Труды Ин-та зоологии АН Укр. ССР, т. VI, 1951.
  8. Свириденко П. А. Мышевидные грызуны и защита от них урожая, запасов продуктов и древесных культур. Киев, 1953.
  9. Снегирев В. Влияние восходящих потоков воздуха на осаждение арсената кальция. Сборник ВНИСХА, 4, 1934.
  10. Фалькенштейн Б. Ю. Материалы к обоснованию системы борьбы с сусликами и некоторыми другими грызунами при степном лесоразведении. Отчет за 1951 год (Ճամաց հր):

Օ. Պ. Ավետիսյան

## Опыты по вненоровому применению некоторых родентосидов против полевок в Армянской ССР

### Р е з ю м е

Полевки *Microtus arvalis* Pall. и *Microtus socialis* Pall. в условиях Армянской ССР являются основными видами вредных грызунов.

До сего времени в республике применялось внутриноровое внесение отравленных приманок. При этом способе каждое норовое отверстие обрабатывается отдельно. Производительность труда при этом способе борьбы низкая, вследствие чего в годы массового появления полевок этот способ не дает желательных результатов.

В 1953 и 1954 гг. в некоторых районах Армении испытывались вненоровые способы борьбы. Одновременно с этим, для сравнения, испытывались существующие методы, т. е. внесение в норовые отверстия зерновых приманок, отравленных 5% раствором арсенита на- трия и арсенита кальция в виде порошка.

При вненоровом способе применения ядов использовались приманки (ячмень), отравленные фосфидом цинка, содержащие 3,5 и 7% яда при нормах расхода 1, 2, 3, 4, 6, 8 и 12 зерен на 1 кв. м. Испытывалось также опыливание растительности вокруг норовых отверстий арсенитом кальция из расчета 5 г порошка на площади около

0,2 кв м вокруг каждого норового отверстия, или арсенатом кальция из расчета 5, 10 и 20 кг на га. Испытывался и способ постоянных пунктов отравления грызунов по способу П. А. Свириденко.

Осенью 1954 г. для разбрасывания отравленного зерна использовались также самолеты, при помощи которых на площади 2200 га проводились производственные опыты. Норма расхода отравленного фосфидом цинка приманки при авиаобработке составляла 2 и 3 кг на га при содержании 5% яда.

На основании этих данных можно сделать следующие выводы.

1. В условиях Армянской ССР вполне возможна вненоровая борьба против полевок разбрасыванием отравленных зерен.

2. Этот способ целесообразно применять в местах массового размножения полевок.

3. Целесообразно обрабатывать также места, где невозможно обрабатывать каждое норовое отверстие отдельно.

4. Отравленные приманки можно разбрасывать как вручную, так и при помощи самолетов. В условиях Армении самолет типа АН-2 за один рабочий день может отработать до 1600 га.

5. Наилучшим средством борьбы с полевками является приманка с фосфидом цинка. При разбрасывании против общественной полевки необходимо применять отравленные приманки с содержанием 3% фосфата цинка из расчета 2 кг на га, а против обыкновенной—5%, фосфата цинка из расчета 3 кг на га.

6. При внутриноровом применении против обыкновенной полевки содержание яда в приманке должно быть 5%, против общественной—3%. Норма расхода отравленной приманки при борьбе с обоими видами полевок—4 зерна на каждое норовое отверстие.

7. Равномерное разбрасывание отравленных приманок при норме расхода 3 кг/га безопасно для травоядных домашних животных, вследствие чего карантинные мероприятия на отравленных участках излишни.

8. Отравленные зерна крайне опасны для домашних птиц, следовательно, вненоровую борьбу следует проводить лишь в недоступных для них местах.